CENTER FOR TRUTH & JUSTICE

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՄԵՆԱՄՅԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՁԱՅՆԵՐ՝ ԸՆԴԴԵՄ ՄՈՌԱՑՈՒԹՅԱՆ

ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՀԵՐՆ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

AUA American University of Armenia

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԾՐԱԳԻՐ

2026 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 13–14

ՎԱՅՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՀԱՀ)
ԵՐԵՒԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
CFTJUSTICE.ORG

Ամբողջ աշխարհում ցեղասպանության, մարդկության դեմ հանցագործությունների, պատերազմական հանցագործությունների և զանգվածային բռնության այլ ձևերի զոհերը շարունակում են բախվել խորքային հակասության: Թեև միջազգային իրավունքը գնալով ավելի լայնորեն է ճանաչում նրանց իրավունքները, նրանցից շատերի ձայնը շարունակում է մնալ անլսելի, նրանց կրած վնասը՝ չճանաչված, իսկ իրենք՝ արդարադատության իրականացման գործընթացներից դուրս մղված: Բռնությունից փրկված անձինք հաճախ շարունակում են ապրել տեղահանության, կորստի, հոգեբանական տրավմայի, ժխտողականության և երկարատև անորոշության պայմաններում՝ նույնիսկ բռնության ավարտից տարիներ անց: Վերջին երեք տասնամյակների ընթացքում միջազգային և ներպետական քրեական հետապնդումները, ճշմարտության բացահայտման մեխանիզմները, փոխհատուցման ծրագրերն ու պատասխանատվության ապահովման այլ նախաձեռնությունները փորձել են արձագանքել միջազգային ծանրագույն հանցագործություններին:
Այնուամենայնիվ բազմաթիվ զոհերի համար արդարադատությունը շարունակում է մնալ մասնակի, ուշացած, ընտրովի կամ անհասանելի: Իրավական գործընթացները հաճախ չեն արդարացնում ճանաչման, արժանապատվության, ճշմարտության բացահայտման, մասնակցության և պատճառված վնասի հատուցման վերաբերյալ նրանց ակնկալիքները: Ժամանակակից հակամարտությունները շարունակում են նոր զոհերի պատճառ դառնալ աշխարհի տարբեր տարածաշրջաններում, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղում, Ուկրաինայում, Սուդանում, Սիրիայում, Իրաքում, Գազայում և Իսրայելում: Միևնույն ժամանակ, Ռուանդայում, Բոսնիա և Հերցեգովինայում, Սիեռա Լեոնեում, Կամբոջայում տեղի ունեցած նախկին ոճրագործություններից փրկված անձինք, ինչպես նաև եզդիական համայնքի ներկայացուցիչները շարունակում են առերեսվել բռնության երկարաժամկետ հետևանքներին:
Այս մարտահրավերներն առավել խորանում են քաղաքական այնպիսի իրողությունների պայմաններում, երբ խաղաղության բանակցությունները, աշխարհաքաղաքական պայմանավորվածությունները, վերականգնմանն ուղղված ջանքերն ու հարաբերությունների կարգավորման գործընթացները կարող են առաջ ընթանալ առանց զոհերի իմաստալից մասնակցության՝ արդարադատությունն ու պատասխանատվության ապահովումը դարձնելով երկրորդական կամ քաղաքական սակարկության առարկա:
Այս համատեքստում «Ձայներ՝ ընդդեմ մոռացության. զանգվածային ոճրագործությունների զոհերն անպատժելիության դարաշրջանում» միջազգային համաժողովի նպատակն է զոհերի ձայնն ու փորձառությունը դարձնել պատասխանատվության, արդարադատության, հիշողության և խաղաղաշինության շուրջ քննարկումների առանցքը: Համաժողովը զոհերին չի դիտարկում բացառապես որպես իրավական գործընթացներում վկաներ կամ ինստիտուցիոնալ արձագանքների պասիվ շահառուներ: Այն նրանց ճանաչում է որպես հիշողության, գիտելիքի, դիմակայունության և բարոյական հեղինակության կրող ու ձևավորող ակտիվ դերակատարներ, որոնց փորձառությունը պետք է ձևավորի արդարադատության ընկալումն ու դրա իրականացմանն ուղղված մոտեցումները:
Միավորելով վերապրածներին, զոհերի ներկայացուցիչներին, իրավաբաններին, հոգեբաններին, քաղաքականություն մշակողներին, գիտնականներին և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին՝ համաժողովը ստեղծում է համեմատական և միջգիտակարգային քննարկումների հարթակ: Այն հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու միջազգային արդարադատության հնարավորություններն ու սահմանափակումները, հոգեբանական տրավմայի և ժխտողականության երկարաժամկետ հետևանքները, ճանաչման և փոխհատուցման հարցերը, ինչպես նաև այն վտանգները, որոնք առաջանում են, երբ քաղաքական նպատակահարմարությունը գերակայում է պատասխանատվության ապահովման նկատմամբ:
Համաժողովի հիմքում պարզ սկզբունք է. զոհերը չպետք է մնան արդարադատության վերաբերյալ քննարկումների լուսանցքում: Աշխարհաքաղաքական մասնատվածության և ընտրովի պատասխանատվության այս ժամանակահատվածում զոհերի ձայնը լսելը ճշմարտության, արդարադատության, արժանապատվության և կայուն խաղաղության ապահովման ցանկացած բովանդակալից գործընթացի անփոխարինելի բաղադրիչն է:



ԹՎԱՅԻՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԳՐՈՒՄ, ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Համաժողովի հիմնական թեման լրացնող այս թվային ցուցադրությունը ներկայացնում է «Ճշմարտության և արդարադատության կենտրոն»-ի կողմից ընտրված վկայություններ, փաստագրական տեսանյութեր և տեսողական նյութեր:
Վեց էկրանների միջոցով ներկայացվող նյութերն անդրադառնում են զոհերի և բռնությունը վերապրածների փորձառություններին, միջազգային ծանրագույն հանցագործությունների փաստագրմանը և պատմական հիշողության նշանակությանը:
Ցուցադրությունն ընդգծում է, թե ինչպես են վկայություններն ու փաստագրական նյութերը հակազդում հիշողության ջնջմանը, նպաստում ճշմարտության պահպանմանը և առաջ մղում արդարադատության ու պատասխանատվության ապահովման գործընթացները:

Վայրը՝ Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀ), The Bridge:
Ցուցադրությանը ծանոթանալու համար խնդրում ենք հետևել դեպի The Bridge ուղղորդող ցուցանակներին:



ՎԻՐՏՈՒԱԼ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՂԾՎԵԼ Է UPSTREAM INTERNATIONAL-Ի ԿՈՂՄԻՑ: ՀԻՄՆԱԴՐԵԼ ԵՒ ՄՇԱԿԵԼ ԵՆ ՌԱՅԱՆ Դ'ՍՈՒՉԱՆ ԵՒ ԴԻԺՈՆ ԴԱՋԻՆ:

Ինտերակտիվ ցուցադրության առանցքային բաղադրիչը վիրտուալ իրականության նորարարական փորձառությունն է՝ «Ոչ ոք չի լսում. Սինջարի մոռացված ձայները» (Nobody's Listening: The Forgotten Voices of Sinjar):

Սենյակի ողջ տարածքն ընդգրկող այս ինտերակտիվ փորձառությունը մասնակիցներին տեղափոխում է Հյուսիսային Իրաք՝ համադրելով 360 աստիճանով փաստագրական նկարահանումները, եզդի արվեստագետների տպավորիչ ստեղծագործությունները և վիրտուալ իրականության նորագույն տեխնոլոգիաները:

Սինջարի Քոչո գյուղում ծավալվող և տարբեր ուղղություններով զարգացող պատմության միջոցով մասնակիցները հնարավորություն են ստանում լսելու «Իսլամական պետություն» (ISIS) ահաբեկչական կազմակերպության կողմից առևանգված և սեռական ստրկության ենթարկված երիտասարդ եզդի կնոջ, զանգվածային սպանությունից փրկված նրա եղբոր, ինչպես նաև գյուղի վրա հարձակմանը մասնակցած ISIS-ի զինյալի պատմությունները:

Վիրտուալ իրականության 12-րոպեանոց փորձառությունը հասանելի կլինի Ֆակուլտետի հյուրասրահում (Faculty Lounge):

Օգնության անհրաժեշտության դեպքում խնդրում ենք դիմել մեր կամավորներից որևէ մեկին:

Իմացեք ավելին՝ www.nobodys-listening.com/exhibition


NOBODY'S LISTENING

WINNER VR AWARDS VR SOCIAL IMPACT AWARD 2022

UP STREAM

ԻՐԱՎՈՒՆՔ ԱՌԱՆՑ ՊԱՏՐԱՆՔՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՑՅԱԼԸ, ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Հեղինակ՝ Գուրգեն Պետրոսյան
«Ճշմարտության և արդարադատության կենտրոն»-ի (CFTJ) հետ համագործակցությամբ

Արդյոք միջազգային իրավունքն իսկապես պաշտպանում է փոքր պետություններին, թե՞ ուժն ու աշխարհաքաղաքականությունն են միշտ գերիշխում: Այս խորը վերլուծության մեջ միջազգային քրեական իրավունքի փորձագետ Գուրգեն Պետրոսյանը քննարկում է, թե ինչպես Հայաստանը կարող է հաղթահարել համակարգային սահմանափակումները և միջազգային իրավունքն օգտագործել որպես պետական կառավարման իրական գործիք:

Անդրադառնալով Հայաստանի իրավական պատմությանը (Հայոց ցեղասպանությունից և Սևրի պայմանագրից մինչև անկախության ձեռքբերում, Լեռնային Ղարաբաղի հակամարտություն, Միջազգային քրեական դատարան և ժամանակակից զարգացումներ) Պետրոսյանը վերլուծում է Հայաստանի անցած ուղին միջազգային իրավունքի համատեքստում՝ մատնանշելով բաց թողնված հնարավորություններն ու առջևում սպասվող մարտահրավերները:

Գիրքը հնարավոր կլինի ձեռք բերել Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Փարամազ Ավետիսյան մասնաշենքի առաջին հարկում՝ «Ճշմարտության և արդարադատության կենտրոն»-ի (CFTJ) գրանցման սեղանի հարևանությամբ:

Գրքի հրատարակության իրավունքները պատկանում են «Նյումեգ» ՍՊԸ-ին:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՄԵՆԱՄՅԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԶԱՅՆԵՐ՝ ԸՆԴԴԵՄ ՄՈՌԱՑՈՒԹՅԱՆ

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՀԵՐՆ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

ՕՐ 1

ՈՒՐԲԱԹ, 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13

ՎՆԱՍԻ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԴՐԱ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐՈՎ ԱՊՐԵԼԸ

09:30 – 09:50 ԳՐԱՆՑՈՒՄ — ՄՈՒՏՔՆ ԱԶԱՏ Է

09:50 – 10:30 ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ



ՀԱՐԳԱՐԺԱՆ ԿԱՍԻԱ ԱԲԳԱՐԵԱՆ

Դատավոր, Կալիֆոռնիայի բարձրագույն դատարան



ԴՈԿՏՈՐ ԳՈՒՐԳԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Միջազգային քրեական իրավունքի ավագ մասնագետ, Նյուրնբերգյան սկզբունքների միջազգային ակադեմիա

Գրքի շնորհանդես և վաճառք համաժողովի ընթացքում

«Իրավունք առանց պատրանքների»

Հայաստանի անցյալը, բացթողումները և միջազգային իրավունքի իրական հնարավորությունները



ԷՄԻԼՅԱ ՕՀԱՆՅԱՆ

Հայոց ցեղասպանության զոհի ժառանգ

10:30 – 11:00 ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՆԱԽՈՍ



ԴՈԿՏՈՐ ՅԱԵԼ ԴԱՆԻԵԼԻ

Հիմնադիր և գործադիր տնօրեն, Տրավմայի միջսերնդային հետևանքների ուսումնասիրման, բուժման և կանխարգելման միջազգային կենտրոն



ԳՈՌ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ

Տնօրենների խորհրդի նախագահ, «Ճշմարտության և արդարադատության կենտրոն» (CFTJ)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՄԵՆԱՄՅԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԶԱՅՆԵՐ՝ ԸՆԴԴԵՄ ՄՈՌԱՑՈՒԹՅԱՆ

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՃԱՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՀԵՐՆ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

ՕՐ 1

ՈՒՐԲԱԹ, 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13

11:00 – 12:30 ՊԱՆԵԼԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ I. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՃԱՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ՎԵՐԱՊՐՈՒՄ ՏԱՐԲԵՐ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ



ԷԼԻԶԱԲԵԹ ԱՏԻԵՆՈ ՏԱՎՈ
Քենիա (հեռավար)



ԴՈԿՏՈՐ ՍԱՐԿԱՎԱՏ ՋԱԼԻԼ
Քուրդիստանի տարածաշրջան - Իրաք



ՍՎԵՏԼԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Լեռնային Ղարաբաղ



ԶԱՅՆՈՒԼ ՄՈՒՍՏԱՖԱ
Մյանմա



ԹՈՄԱՍ ԲԵՔԵՐ
Օկուպացված պաղեստինյան տարածքներ



ՌՈՒԲԵՆ ԲՈՒՀՈՐԻ
Նիգերիա



ՀԱՐԳԱՐԺԱՆ ԿԱՍԻԱ ԱԲԳԱՐԵԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
Դատավոր, Կալիֆոռնիայի բարձրագույն դատարան

12:30 – 13:40 ՃԱՇԻ ԸՆԴՄԻՋՈՒՄ – ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀՅՈՒՐԱՍՐԱՀ (FACULTY LOUNGE), PAB

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՄԵՆԱՄՅԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՁԱՅՆԵՐ ԸՆԴԴԵՄ ՄՈՌԱՑՈՒԹՅԱՆ

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՀԵՐՆ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

ՕՐ 1

ՈՒՐԲԱԹ, 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13

13:40 – 15:00 **ՊԱՆԵԼԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ II. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՐՈՒՆԱԿՎՈՂ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**



ՆԱՏԻԱ ՆԱՎՐՈՒԶՈՎ
Գործադիր տնօրեն, «Յազդա» («Yazda»)



ԴՈԿՏՈՐ ՖԻԼԻՊ ԱՍԲԱԽ (ՀԵՌԱՎԱՐ)
Ղեկավար, Տուժողների մասնակցության և հատուցումների բաժին, Միջազգային քրեական դատարան (ՄՔԴ)



ԳԱԲՐԻԵԼԱ ՌԱԴՈՒ
Իրավական հարցերով հետազոտող, Թ. Մ. Ք. Ասսեր ինստիտուտ



ԴՈԿՏՈՐ ԵՂԻՇԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Դոցենտ, «Միջազգային դատարաններ և արբիտրաժ» մագիստրոսական ծրագրի ղեկավար, Երևանի պետական համալսարան
Կառավարող գործընկեր, «Equity Law Partners» իրավաբանական ընկերություն



ԴՈԿՏՈՐ ԳՈՒՐԳԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
Միջազգային քրեական իրավունքի ավագ մասնագետ, Նյուրնբերգյան սկզբունքների միջազգային ակադեմիա

15:00 – 15:20 **ՍՈՒՐՃԻ ԸՆԴՄԻՋՈՒՄ – ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀՅՈՒՐԱՍՐԱՀ (FACULTY LOUNGE, PAB)**

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՄԵՆԱՄՅԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՁԱՅՆԵՐ՝ ԸՆԴԴԵՄ ՄՈՌԱՑՈՒԹՅԱՆ

ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՀԵՐՆ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

ՕՐ 1

ՈՒՐԲԱԹ, 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13

15:20 – 16:50 **ՊԱՆԵԼԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ III. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏՐԱՎՄԱ, ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՉԼՍՎԱԾ ՄՆԱԼՈՒ ԳԻՆԸ**



ԴԱՎԻԹ ԳԵՒՈՐԳՅԱՆ
Ղեկավար, ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոն
Նախագահ և համահիմնադիր
Կոգնիտիվ-վարքաբանական թերապիայի գիտակրթական հայկական ասոցիացիա



ԹԻՔՐԱՆ ՄԱՏՈ
Տնօրեն, «Ոչ ոք չի լսում» («Nobody's Listening»)



ԴՈԿՏՈՐ ՅԱԵԼ ԴԱՆԻԵԼԻ
Հիմնադիր և գործադիր տնօրեն, Տրավմայի միջսերնդային հետևանքների ուսումնասիրման, բուժման և կանխարգելման միջազգային կենտրոն



ԱՐԱ ՂԱԶԱՐՅԱՆ
Հիմնադիր, «ԱՐԱ ՂԱԶԱՐՅԱՆ» փաստաբանական գրասենյակ



ԴՈԿՏՈՐ ՊԱԲԼՈ ԳԱՎԻՐԱ ԴԻԱՍ
Ծրագրերի պատասխանատու, Նյուրնբերգյան սկզբունքների միջազգային ակադեմիա



ՄԻՆԱ ԿԻՒՐԵՂԵԱՆ ՀԱԼԼ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
Պաշտպանության կողմի իրավաբանական աշխատակից, Կոսովոյի մասնագիտացված պալատներ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՄԵՆԱՄՅԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՁԱՅՆԵՐ՝ ԸՆԴԴԵՄ ՄՈՌԱՑՈՒԹՅԱՆ

ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՀԵՐՆ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

ՕՐ 2

ՇԱԲԱԹ, 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10:00 – 10:30 ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՆԱԽՈՍ



ՆԻԿՈԼԱՍ ՔՈՒՄՋՅԱՆ

Ղեկավար, ՄԱԿ-ի՝ Մյանմայի հարցերով անկախ քննչական մեխանիզմ (IIMM)



ՀԱՐԳԱՐԺԱՆ ԿԱՍԻԱ ԱԲԳԱՐԵԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ

Դատավոր, Կալիֆոռնիայի բարձրագույն դատարան

10:30 – 11:50 ՊԱՆԵԼԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ IV. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ



ՇՏԵՖԱՆ ՎԵՍՊԻ

Միջազգային քննչական նախկին դատավոր, Հատուկ քրեական դատարան (Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն)
Դատավարությունների գծով նախկին ավագ դատախազ, Նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական տրիբունալ (ICTY)
Նախկին դաշնային դատախազ, Շվեյցարիայի գլխավոր դատախազության գրասենյակ (OAG)



ՔՐԻՍՏԻԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Փաստաբան, «Մխիթարյան» փաստաբանական գրասենյակ (Աշաֆենբուրգ)
Համահիմնադիր, Գերմանահայ իրավաբանների միություն (DEARJV)



ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ՀԻԼԴԵ ՖԱՐԹՀՈՖԵՐ

Դոցենտ, Էրլանգեն-Նյուրնբերգի Ֆրիդրիխ Ալեքսանդրի համալսարան (FAU)



ՍԻՐԱՆՈՒՇ ՍԱՀԱԿՅԱՆ

Նախագահ, Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոն



ԳԵՒՈՐԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ, ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ

Համաժողովի նախագահ և տնօրենների խորհրդի անդամ, «Ճշմարտության և արդարադատության կենտրոն» (CFTJ)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՄԵՆԱՄՅԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՁԱՅՆԵՐ՝ ԸՆԴԴԵՄ ՄՈՌԱՑՈՒԹՅԱՆ

ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՀԵՐՆ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

ՕՐ 2

ՇԱԲԱԹ, 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14

11:50 – 13:00 ՃԱՇԻ ԸՆԴՄԻՋՈՒՄ – ՀԱՀ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔ՝ ԱԼԲԵՐՏ ԵՒ ԹԵՐՐԻ ԲԵՋՋՅԱՆ ՃԱՇԱՐԱՆ

13:00 – 14:20 ՊԱՆԵԼԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ V. ՃԱՆԱՉՈՒՄ, ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԵՒ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ



ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ԼՅՈՒՔ ՄՈՖԵԹ

Մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի ամբիոնի վարիչ, Բելֆաստի Քուինս համալսարան



ՀՈՒՎԵՅԴԱ ԱՐՐԱՖ

Պաղեստինյան ծագումով ամերիկացի՝ քաղաքացիական և մարդու իրավունքների հարցերով փաստաբան Համահիմնադիր, «Միջազգային համերաշխության շարժում» (ISM)



ՋՈԶԵՖ ՇԵԿԼԱ

Հիմնադիր և համակարգող, Բնակարանային և հողային իրավունքների ցանց (HLRN), «Հաբիթաթ» միջազգային կոալիցիա



ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Մարդու իրավունքների համակարգող, փախստականների իրավունքների մասնագետ, «Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ» (DDF)



ԴՈԿՏՈՐ ԵՂԻՇԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ

Դոցենտ, «Միջազգային դատարաններ և արբիտրաժ» մագիստրոսական ծրագրի ղեկավար, Երևանի պետական համալսարան
Կառավարող գործընկեր, «Equity Law Partners» իրավաբանական ընկերություն

14:20 – 14:40 ՍՈՒՐՃԻ ԸՆԴՄԻՋՈՒՄ – ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀՅՈՒՐԱՍՐԱՀ (FACULTY LOUNGE, PAB)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՄԵՆԱՄՅԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԶԱՅՆԵՐ՝ ԸՆԴԴԵՄ ՄՈՌԱՑՈՒԹՅԱՆ

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՀԵՐՆ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

ՕՐ 2

ՇԱԲԱԹ, 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14

14:40 – 16:00 **ՊԱՆԵԼԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ VI. ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ, ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԶՈՀԵՐԻՆ ՄՈՌԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՏՆԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**



ՍԱՌԱ ԼԵԱ ՈՒԻԹՍՈՆ

Նախկին գործադիր տնօրեն, «DAWN»



ՆԻԿՈԼԱՍ ՔՈՒՄՋՅԱՆ

Ղեկավար, ՄԱԿ-ի՝ Մյանմայի հարցերով անկախ քննչական մեխանիզմ (IIMM)



ՄԱՔՍԻՄԱՍ ՄԻԼՏԱ

Ուկրաինայի գրասենյակի ղեկավար, «Հաշվետվողականության նախագիծ» («The Reckoning Project»)



ԷՈՒԽԵՆԻԱ ՎԱԼԵՆՍՈՒԵԼԱ

Իրավական հարցերով պատասխանատու, Միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ) դատախազի գրասենյակ (OTP)



ՀԱՐԳԱՐԺԱՆ ԿԱՍԻԱ ԱԲԳԱՐԵԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ

Դատավոր, Կալիֆոռնիայի բարձրագույն դատարան

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՄԵՆԱՄՅԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԶԱՅՆԵՐ ԸՆԴԴԵՄ ՄՈՌԱՑՈՒԹՅԱՆ

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՀԵՐՆ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

ՕՐ 2

ՇԱԲԱԹ, 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14

16:00 – 16:30 ՊԱՆԵԼԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՀԵՐԻ ՀԱՄԱՐ



ՀԱՐԳԱՐԺԱՆ ԱՐԻԵԼ ԼԻԽՈ

Դաշնային դատավոր, Բուենոս Այրես ինքնավար քաղաքի թիվ 4 դաշնային քրեական և ուղղիչ դատարան



ՀԱՐԳԱՐԺԱՆ ԴԱՆԻԵԼ ՕՐԱՍԻՈ ՕԲԼԻԳԱԴՈ

Դաշնային դատավոր, Բուենոս Այրես ինքնավար քաղաքի թիվ 5 դաշնային քրեական գործերով բանավոր դատաքննության տրիբունալ



ԴՈԿՏՈՐ ԻՐԵՆԵ ՎԻԿՏՈՐԻԱ ՄԱՍԻՄԻՆՈ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ

Հրավիրյալ պրոֆեսոր, Ինդիանայի համալսարանի Ռոբերտ Հ. Մաքքինիի իրավաբանական դպրոց

16:30 – 16:50 ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ ԵՒ ՓԱԿՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ



ՀԱՐԳԱՐԺԱՆ ԿԱՍԻԱ ԱԲԳԱՐԵԱՆ

Հարգարժան Կասիա Աբգարեանը հանդիսանում է Կալիֆոռնիայի Գերագույն դատարանի դատավոր: Մինչև 2014 թվականին դատավոր դառնալը, նա աշխատել է որպես Apkarian Defense APC ում ավագ փաստաբան և նախագահ (2007-2014), Orange County-ի հանրային պաշտպանի տեղակալ (2000-2007), ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հասարակայնության հետ կապերի խորհրդական (1998-1999), «Դեմոկրատներ 2000»-ի գործադիր տնօրեն (1997-1998) և Վաշինգտոնում ՀՀ դեսպանատան դեսպանի հատուկ օգնական (1996-1997): Նաև աշխատել է Ամերիկայի Հայկական Ասամբլեայի հետ (1992-1995): Դատավոր Աբգարեանը արժանացել է 2022 թվականի Ալբա Վիտկինի անվան մարդասիրական մրցանակին: «Ճշմարտության և արդարադատության կենտրոն»-ի հիմնադիր անդամ և ավագ խորհրդատու է:



ԴՈԿՏՈՐ ԳՈՒՐԳԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Դոկտոր Գուրգեն Պետրոսյանը Նյուրնբերգյան սկզբունքների միջազգային ակադեմիայի միջազգային քրեական իրավունքի հարցերով ավագ մասնագետ է և հայ իրավագետ, որը մասնագիտացած է միջազգային քրեական իրավունքի, միջազգային իրավունքի և մարդու իրավունքների ոլորտներում: Նա դասավանդում է էրլանգեն-Նյուրնբերգի Ֆրիդրիխ Ալեքսանդրի համալսարանում, Այխշտետ-Ինգոլշտադտի կաթոլիկ համալսարանում և Երևանի պետական համալսարանում: Նախքան Նյուրնբերգյան սկզբունքների միջազգային ակադեմիա վերադառնալը՝ դոկտոր Պետրոսյանը Գերմանիայի խոշորագույն տեքստիլ ընկերություններից մեկին խորհրդատվություն է տրամադրել բիզնեսի և մարդու իրավունքների հարցերի վերաբերյալ՝ մատակարարման շղթաներում պատշաճ ջանասիրության մասին՝ Գերմանիայի օրենքի պահանջներին համապատասխան: Դրանից առաջ ղեկավարել է էրլանգեն-Նյուրնբերգի Ֆրիդրիխ Ալեքսանդրի համալսարանի միջազգային քրեական իրավունքի հետազոտական բաժինը:



ԷՄԻԼՅԱ ՕՀԱՆՅԱՆ

Էմիլյա Աշոտի Օհանյանը 1915 թվականի Հայոց ցեղասպանությունից՝ թուրքական յաթաղանից, հրաշքով մազապուրծ եղած Աշոտ Հովհաննեսի Օհանյանի ժառանգն է:
1947 թվականին նրա ընտանիքը Եգիպտոսից հայրենադարձվել է Հայաստան և բնակության ուղարկվել Արթիկի շրջանի Վարդաքար գյուղ, որտեղ 1948 թվականի մարտի 15-ին ծնվել է Էմիլյան: Այնուհետև ընտանիքը տեղափոխվել է Երևան: 1949 թվականին հորը ձերբակալել և որպես քաղաքական բանտարկյալ տասը տարով աքսորել են Սիբիր՝ երիտասարդ մորը թողնելով երեք մանկահասակ երեխաների՝ Էմիլյայի և նրա երկու եղբայրների խնամքի պատասխանատվությունը: 1955 թվականին հայրն արդարացվել և վերադարձել է ընտանիք:
1970 թվականին Էմիլյան ավարտել է Երևանի մանկավարժական ինստիտուտի Գեղագիտության ֆակուլտետի նկարչա-գծագրական բաժինը՝ ստանալով նկարիչ-մանկավարժի որակավորում: 1970–1998 թվականներին աշխատել է որպես նկարիչ-մանկավարժ՝ դպրոցում, Ռուսական մանկավարժական ուսումնարանում, Գեղագիտական կենտրոնում և Ուսուցիչների կատարելագործման ինստիտուտում: 1998–2018 թվականներին աշխատել է Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցությունում՝ որպես գեղարվեստի հարցերի պատասխանատու, ինչպես նաև եղել է Հայաստանում հրատարակվող առաջին մանկական հոգևոր՝ «Շողիկ» ամսագրի հիմնադիր-խմբագիրը:
Էմիլյան ամուսնացած է, ունի երեք որդի և վեց թոռ: Այսօր նա զբաղվում է իր սիրելի արվեստով՝ գեղանկարչությամբ:



ԴՈԿՏՈՐ ՅԱԵԼ ԴԱՆԻԵԼԻ

Դոկտոր Յաել Դանիելին (www.dryaeldanieli.com) կլինիկական հոգեբան է, տրավմատոլոգիայի առաջամարտիկ, զոհաբան և հոգեպատմաբան: Նա Տրավմայի միջսերնդային հետևանքների ուսումնասիրման, բուժման և կանխարգելման միջազգային կենտրոնի հիմնադիրն է, գործադիր տնօրենը և ՄԱԿ-ում ներկայացուցիչը (www.icmglt.org): 1970-ականներին նա համահիմնադրել է «Հոլոքոստը վերապրածների և նրանց երեխաների խմբային նախագիծը»՝ տրավմայի ենթարկված այս խմբերի համար առաջին ծրագիրը: Ծավալուն հոգեթերապևտիկ աշխատանք է իրականացրել վերապրածների և նրանց սերունդների հետ՝ անհատական, ընտանեկան, խմբային և համայնքային մակարդակներում, ուսումնասիրել է հետպատերազմյան արձագանքներն ու վերաբերմունքը նրանց նկատմամբ, ինչպես նաև դրանց և Հոլոքոստի ազդեցությունը նրանց կյանքի վրա: Բազմաթիվ լեզուներով լայնորեն հրապարակել է աշխատություններ և արժանացել միջազգային պարգևների՝ տրավմայից հետո ողջ կյանքի ընթացքում և սերունդների միջև հարմարվողականության, աշխարհի տարբեր վայրերում զանգվածային տրավմա վերապրած այս և այլ խմբերի հետ աշխատանքի համար օպտիմալ խնամքի ու բազմամասնագիտական վերապատրաստման, ինչպես նաև վերականգնողական արդարադատության վերաբերյալ:

Տրավմայի բազմասերնդային ժառանգության Դանիելիի գնահատման գործիքը հնարավորություն է տալիս գիտականորեն հիմնավորված գնահատում և միջազգային համեմատական ուսումնասիրություն իրականացնել: Խորհրդատու է եղել Հարավային Աֆրիկայի ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովին և Ռուանդայի կառավարությանը՝ զոհերի հատուցման հարցերով, ինչպես նաև աշխատել է, ի թիվս այլ վայրերի, Հյուսիսային Իռլանդիայում և Բոսնիա և Հերցեգովինայում: Որպես Չիկագոյի մասնագիտական հոգեբանության դպրոցի միջազգային հոգեբանության վաստակավոր պատվավոր պրոֆեսոր ստեղծել է միջազգային հոգեբանության առաջին դոկտորական ծրագիրը, համահիմնել է Տրավմատիկ սթրեսի ուսումնասիրությունների միջազգային ընկերությունը և եղել դրա առաջին կին նախագահը: Դոկտոր Դանիելին մասնակցել է զոհերի իրավունքներին առնչվող միջազգային իրավական բոլոր գործիքների ստեղծմանը և եղել է նախկին Հարավսլավիայի ու Ռուանդայի հարցերով միջազգային քրեական տրիբունալների և Միջազգային քրեական դատարանի փորձագետ կամ խորհրդատու՝ զոհերի, վերապրածների և աշխատակիցների խնամքի հարցերով: 2008 թվականին նշանակվել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի գրասենյակի ահաբեկչության զոհերի հարցերով խորհրդական:



ԳՈՌ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, ՓԱՍՏԱԲԱՆ

Գոռ Մնացականյանը Կալիֆոռնիայի փաստաբան է և համազգային դեղագործական ընկերության գլխավոր իրավաբանական տնօրեն: Նա նաև ղեկավարում է Հարավային Կալիֆոռնիայի իրավաբանական ընկերություն: Ծնվել է Երևանում և ուսանել է UCLA ում և Southwestern Law School-ում: 2020 թվականին նա համահիմնադրել է «Ճշմարտության և արդարադատության կենտրոն»-ը, որը փաստաթղթավորում է պատերազմական հանցագործությունները և առաջ մղում միջազգային իրավական հաշվետվողականությունը: Որպես CFTJ-ի հիմնադիր խորհրդի նախագահ՝ Գոռը նպաստել է դրա կայացմանը որպես իրավաբանների, գիտնականների, հաստատությունների կողմից և համաշխարհային օգտագործվող ապացույցների հիմնական աղբյուր:



ԷԼԻԶԱԲԵԹ ԱՏԻԵՆՈ ՏԱՎՈ

Էլիզաբեթ Ատիենո Տավոն Քենիայից մարդու և կանանց իրավունքների պաշտպան է, ով վերապրել է հակամարտության հետ կապված սեռական բռնություն: Նա աշխատում է հանուն մարդու իրավունքների ծանր խախտումները վերապրած անձանց համար արդարության, պատասխանատվության, հատուցման և արժանապատվության ապահովման: «Վերապրածների ազատագրման ֆորում» (Survivors Liberation Forum, SLF) կազմակերպության հիմնադիրն ու գործադիր տնօրենն է, որտեղ աշխատում է լսելի դարձնել վերապրածների ձայնը և ամրապնդել նրանց արդարության ու հատուցման կարիքները կենտրոնում դնող մոտեցումները: Էլիզաբեթը հետևողականորեն պայքարում է, որ բռնություն վերապրած անձինք՝ հատկապես գլոբալ հարավի երկրներից, լիարժեք ներգրավված լինեն արդարադատության գործընթացներում և գործուն մասնակցություն ունենան դրանց: Հիմնվելով անձնական փորձի և տարիների իրավապաշտպան գործունեության վրա՝ աշխատում է հաղթահարել խարանավորումը, ամրապնդել վերապրածների ինքնուրույն գործելու հնարավորությունը և ապահովել, որ նրանց հետ ոչ միայն խորհրդակցեն, այլև ճանաչեն որպես փորձագետներ ու իրենց կյանքին առնչվող քաղաքականությունների և մեխանիզմների ձևավորման ակտիվ մասնակիցներ: Մասնակցել է հակամարտության հետ կապված սեռական բռնության, պատասխանատվության, հատուցման և վերապրածներին կենտրոնում դնող արդարադատության վերաբերյալ միջազգային քննարկումների, ինչպես նաև համագործակցել է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և միջազգային արդարադատության նախաձեռնությունների հետ: Նրա իրավապաշտպան գործունեությունը հիմնված է այն համոզմունքի վրա, որ վերապրածները պետք է ունենան իրենց պատմությունները ներկայացնելու և արդարության հասնելու գործընթացի վրա ազդելու ուժ, արժանապատվություն և հնարավորություն: Էլիզաբեթը շարունակում է օգտագործել իր անձնական փորձն ու մասնագիտական իրավապաշտպան գործունեությունը՝ պահանջելու մեղավորների իրական պատասխանատվություն, վերապրածների ճանաչում և հատուցում, ինչպես նաև արդարադատության համակարգեր, որոնք գործընթացի կենտրոնում դնում են վերապրածներին:



ԴՈԿՏՈՐ ՍԱՐԿԱՎԱՏ ՋԱԼԻԼ

Դոկտոր Սարկավատ Ջալիլը 2009 թվականին ստացել է իրավագիտության բակալավրի (LL.B.) աստիճան Իրաքի Քուրդիստանի տարածաշրջանի Սուլեյմանիայի համալսարանում, 2016 թվականին՝ իրավագիտության մագիստրոսի (LL.M.) աստիճան Կիպրոսի Նիկոսիա քաղաքում գտնվող Մերձավոր Արևելքի համալսարանում, իսկ իրավունքի դոկտորի (Ph.D.) աստիճանը՝ նույն համալսարանի միջազգային իրավունքի ամբիոնում:
2022 թվականից նա Քուրդիստանի միջազգային իրավունքի կենտրոնի (KCIL) գործադիր խորհրդի անդամ է: Քրդերենով երկու գրքի հեղինակ է՝ «Խորհրդածություններ մարդու իրավունքների փիլիսոփայության շուրջ» (Mukiryani Press, Էրբիլ, 2020) և «Մարդասիրական միջամտությունը՝ որպես հավաքական անվտանգության նախագիծ. Անֆալ և Դարֆուր» (KCIL, Սլեյմանի, 2022):
Նաև երեք գիտական հոդվածի հեղինակ է, որոնք հրապարակվել են տեղական ամսագրերում և նվիրված են քրդական ցեղասպանության (կենսաբանական և մշակութային) համեմատական ուսումնասիրությանը՝ Ռուանդայի և Բոսնիայի ցեղասպանությունների համատեքստում:
Նախկինում համագործակցել է ՄԱԿ-ի տարբեր գործակալությունների, մասնավորապես՝ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի (UNHCR) և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF) հետ՝ Իրաքում ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ) և գենդերային հիմքով բռնության (ԳՀԲ) վերաբերյալ ծրագրերի շրջանակում:



ՍՎԵՏԼԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սվետլանա Հարությունյանը ծնվել է 1997 թվականի փետրվարի 15-ին: 2003–2014 թվականներին սովորել է Արցախի Մարտունի քաղաքի թիվ 1 դպրոցում: 2014–2020 թվականներին սովորել է Մխիթար Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանում՝ ստանալով բժշկի որակավորում: 2020–2024 թվականներին նույն համալսարանում մասնագիտացել է ռևմատոլոգիայի ոլորտում: 2023 թվականին նա ավարտել է Հարվարդի բժշկական դպրոցի «HMX Pro Immunology» առցանց դասընթացը:
Փոխանակման ծրագրերի շրջանակում ուսանել է Սանկտ Պետերբուրգի Վ. Ա. Ալմազովի անվան բժշկական հետազոտությունների ազգային կենտրոնում և Ն. Ի. Պիրոգովի անվան Ռուսաստանի ազգային հետազոտական բժշկական համալսարանում: 2024 թվականին ավարտել է Հայաստանի Առողջապահության ազգային ինստիտուտի շտապ բժշկության մասնագիտությամբ օրդինատուրան: Աշխատել է Ստեփանակերտի հանրապետական հիվանդանոցում՝ որպես շտապօգնության բժիշկ և ռևմատոլոգ:
2023 թվականին բռնի տեղահանվել է Արցախից՝ ականատես լինելով պայթյուններին և պատերազմի հետևանքներին: Ներկայումս աշխատում է որպես դասախոս Մխիթար Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի ռևմատոլոգիայի ամբիոնում, ինչպես նաև որպես ռևմատոլոգ՝ թիվ 1 հիվանդանոցում:



ԶԱՅՆՈՒԼ ՄՈՒՍՏԱՖԱ

Զայնուլ Մուստաֆան ռոհինջաների իրավունքների պաշտպան է և Մյանմայում ռոհինջաների դեմ իրականացված ցեղասպանությունը վերապրած անձ: Ծնվել և մեծացել է Մյանմայում, որտեղ ինքն է զգացել իր ժողովրդի նկատմամբ կիրառվող խտրականությունն ու սահմանափակումները, այդ թվում՝ քաղաքացիությունից, տեղաշարժի ազատությունից և կրթության հասանելիությունից զրկումը: 2017 թվականին նա ստիպված է եղել փախչել Բանգլադեշ: Քոքսի Բազարի փախստականների ճամբարներում Զայնուլը համագործակցել է մարդասիրական կազմակերպությունների հետ որպես պաշտպանության հարցերով մասնագետ, իսկ ավելի ուշ որպես բանավոր թարգմանիչ ռոհինջաների իրավունքներին և ցեղասպանությանն առնչվող հետաքննություններում: Ներկայումս բնակվելով Բեռլինում՝ շարունակում է պաշտպանել ռոհինջաների իրավունքները և նպաստել արդարության ու պատասխանատվության ապահովմանը՝ հիմնվելով իր անձնական փորձի և մարդասիրական գործունեության վրա:



ԹՈՄԱՍ ԲԵՔԵՐ

Թոմաս Բեքերը Մարդու իրավունքների համալսարանական ցանցի (University Network for Human Rights) իրավական և քաղաքականության հարցերով տնօրենն է: Վերջին երկու տասնամյակների մեծ մասը նա զբաղվել է Բոլիվիայում մարդու իրավունքներին առնչվող հարցերով: Նա «Մամանին ընդդեմ Սանչես դե Լոսադայի» (Mamani v. Sánchez de Lozada) գործի նախաձեռնության շարժիչ ուժն ու առաջատար փաստաբաններից մեկն էր: Սա ԱՄՆ-ում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ առաջին հաջողված դատական գործն էր պետության՝ դեռևս ողջ նախկին ղեկավարի դեմ: Բեքերը դատական գործընթացը նախաձեռնել է դեռևս Հարվարդի իրավաբանական դպրոցում (Harvard Law School) սովորելու տարիներին: Դպրոցն ավարտել է պատվավոր գնահատականով (cum laude): Բեքերը նաև այն իրավաբանական թիմի անդամներից էր, որի աշխատանքի արդյունքում Բոլիվիայի գերագույն դատարանում անցկացված «Պատասխանատվության դատավարության» (Trial of Responsibilities) շրջանակում յոթ պետական պաշտոնյա պատասխանատվության է ենթարկվել ցեղասպանության համար:

Իրավապաշտպան գործունեություն է իրականացրել աշխարհի տարբեր երկրներում՝ հետաքննելով Հնդկաստանում ադիվասիների և Արևմտյան Սահարայում սահրավիների նկատմամբ խոշտանգումներն ու արտադատական սպանությունները, փաստագրելով պատերազմական հանցագործությունները Լիբանանում և Լեռնային Ղարաբաղում՝ ուսումնասիրելով հողային իրավունքները Հարավային Աֆրիկայում և Պաղեստինում, բացահայտելով մահվան ջոկատների գործունեությունը Հոնդուրասում և Կոլումբիայում: Մեքսիկայում նաև սապատիստ պարտիզանների անձնական պաշտպանությունն է ապահովել ոչ բռնի միջոցներով:

Բեքերը մարդու իրավունքներ է դասավանդում Կոլումբիայի համալսարանի իրավաբանական դպրոցում (Columbia Law School): Նախկինում դասախոսել է Հարվարդի իրավաբանական դպրոցի Մարդու իրավունքների միջազգային կլինիկայում (International Human Rights Clinic): Ուսանողների աշխատանքը ղեկավարելու շրջանակում դասավանդել է նաև Յեյլի, Սթենֆորդի և Կալիֆոռնիայի համալսարանների ուսանողներին: Դասախոսություններ է կարդացել Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտում (Massachusetts Institute of Technology), Յեյլի իրավաբանական դպրոցում (Yale Law School), Կոլումբիայի Անդերի համալսարանում (Universidad de los Andes), Բոլիվիայի էլ Ալտոյի հանրային համալսարանում (Universidad Pública de El Alto) և այլ համալսարաններում:

Նրա գործունեությունը լուսաբանվել է բազմաթիվ լրատվամիջոցներում, այդ թվում՝ «Նյու Յորքի ժամանակներ» (The New York Times), «Վաշինգտոնի փոստ» (The Washington Post), «Պահապան» (The Guardian), «Ազգ» (The Nation), «Ատլանտյան» (The Atlantic), «Աշխարհ» (Le Monde), «Երկիր» (El País), «Արատ» (Vice Magazine), «Կոզի» (Al Jazeera), Բրիտանական հեռարձակման կորպորացիա (British Broadcasting Corporation, BBC), Ազգային հանրային ռադիո (National Public Radio, NPR) և «Յունիվիզիոն» (Univision) լրատվամիջոցներում:

Լինդա Ֆարթինգի հետ համահեղինակած նրա «Պետական հեղաշրջում. բռնության և դիմադրության պատմություն Բոլիվիայում» (Coup: A Story of Violence and Resistance in Bolivia) գիրքն ընդգրկվել է Դյուկի համալսարանի՝ մարդու իրավունքների վերաբերյալ գրքերի համար շնորհվող Խուան Է. Մենդեսի անվան մրցանակի (Duke University Juan E. Mendez Book Award for Human Rights) եզրափակիչ ցանկում:

Փաստաբանական գործունեությունից բացի Բեքերը նաև մրցանակների արժանացած երաժիշտ և երգերի հեղինակ է: Նա ձայնագրություններ է կատարել «Գրեմմի» մրցանակի արժանացած երաժշտական պրոդյուսերների հետ և որպես թմբկահար ու կիթառահար հյուրախաղերով հանդես եկել ամբողջ աշխարհում: Նաև լեռնագնաց է և բարձրացել աշխարհի տարբեր գագաթներ, այդ թվում՝ Էվերեստ:



ՌՈՒԲԵՆ ԲՈՒՀԱՐԻ

Ռուբեն Բուհարին «Դիմակայունության, օգնության և երկխոսության նախաձեռնություն» (Resilience, Aid and Dialogue Initiative, RADi) կազմակերպության համահիմնադիրն ու ծրագրերի տնօրենն է:

Կազմակերպությունն աջակցում է Նիգերիայում՝ երկրի ներսում տեղահանված անձանց, կարիքավոր երեխաներին, որբերին և այրիներին՝ օգնելով նրանց կառուցել արդյունավետ ու բարեկեցիկ կյանք և դառնալ հասարակության գործուն անդամներ: Այն աջակցում է տեղահանված կամ կարիքավոր անձանց, հատկապես երեխաներին ու երիտասարդներին, որպեսզի նրանք ստանան առնվազն հիմնական կրթություն: Աջակցություն է տրամադրվում նաև այդ երեխաների ընտանիքներին, որ երեխաները մեծանան հոգատար ընտանեկան միջավայրում, ունենան ուսման համար նպաստավոր պայմաններ և ապրեն խաղաղ համայնքում:

Երկխոսությունը խթանելու, վստահություն ձևավորելու և համայնքում խաղաղությունն ամրապնդելու նպատակով իրականացվում են սոցիալական նախաձեռնություններ, այդ թվում՝ մասնաճյուղերի ստեղծում, մարզական մրցումների և գործարար սեմինարների կազմակերպում: 2006 թվականից Ռուբենը Նիգերիայում զբաղվում է մարդասիրական գործունեությամբ, լրագրությամբ և հետազոտական աշխատանքով՝ տպագիր, ռադիո և հեռուստատեսային լրատվամիջոցների համար: Նա եղել է Կադունա նահանգի նահանգապետ Պատրիկ Իբրահիմ Յակովայի լրատվամիջոցների հարցերով խորհրդականը մինչև վերջինիս մահը՝ 2012 թվականը: 2014 թվականին նույն պաշտոնն է զբաղեցրել շրջակա միջավայրի նախկին նախարար Լորենտիա Մալամի մոտ: Կադունա նահանգում բռնությունների բռնկումից հետո սկսել է զբաղվել հակամարտությունների կարգավորմամբ, միջնորդությամբ և խաղաղաշինությամբ, ինչպես նաև մարդասիրական աջակցություն տրամադրել երկրի ներսում տեղահանված անձանց:

2015 թվականից աշխատել է զարգացման ոլորտում գործող տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների հետ: Մասնավորապես՝ համագործակցել է Մարդասիրական երկխոսության կենտրոնի (Centre for Humanitarian Dialogue, HD) հետ որպես գործընթացավար: Նաև համագործակցել է ԱՄՆ խաղաղության ինստիտուտի (United States Institute of Peace, USIP) հետ, որտեղ վերապատրաստվել է որպես երկխոսության գործընթացավար: Ինստիտուտի հովանու ներքո գործող Նիգերիայի գործընթացավարների ցանցի անդամ է:

Ռուբենը նաև «Համաշխարհային քրիստոնեական համերաշխություն - Նիգերիա» (Christian Solidarity Worldwide -Nigeria, CSW-N) իրավապաշտպան կազմակերպության մամուլի և հետազոտությունների պատասխանատուն է: Կազմակերպությունը պաշտպանում է յուրաքանչյուրի կրոնի կամ համոզմունքի ազատության իրավունքը:



ՆԱՏԻԱ ՆԱՎՐՈՒԶՈՎ

Նատիա Նավրուզովը «Յազդա» (Yazda) կազմակերպության գործադիր տնօրենն է: Այն միջազգային հասարակական կազմակերպություն է, որի գործունեության առանցքում եզդիների խնդիրներն են: Կազմակերպությունը հիմնադրվել է Սինջարի եզդիական համայնքի դեմ «Իսլամական պետություն» (ISIS) ահաբեկչական կազմակերպության ցեղասպանական արշավի մեկնարկից երեք շաբաթ անց:
Նա Ֆրանսիայում փաստաբանական գործունեության իրավունք ունեցող փաստաբան է՝ մասնագիտացած միջազգային իրավունքի, մարդու իրավունքների և անցումային արդարադատության ոլորտներում: Որպես եզդիական համայնքի անդամ՝ Նատիան 2018 թվականին «Յազդայ»-ին միանալուց ի վեր առանցքային դեր է ունեցել կազմակերպության նախաձեռնություններում: Կազմակերպությունում զբաղեցրել է տարբեր պաշտոններ, այդ թվում՝ ծրագրի ղեկավարի և երկրում գործունեության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի: 2021 թվականին նշանակվել է «Յազդա»-ի իրավական շահերի պաշտպանության գծով առաջին տնօրեն:
Նրա ղեկավարությամբ կազմակերպությունը հավաքել է «Իսլամական պետության» հանցագործությունները վերապրած անձանց վկայությունները և փաստագրել հանցագործությունների վայրերից ստացված ապացույցները: Նաև համագործակցել է միջազգային և ազգային կառույցների հետ, այդ թվում՝ «Իսլամական պետության» հանցագործությունների համար պատասխանատվության ապահովմանն աջակցող ՄԱԿ-ի քննչական խմբի (United Nations Investigative Team to Promote Accountability Against Da'esh Crimes, UNITAD), տարբեր երկրների՝ պատերազմական հանցագործությունների քննությամբ զբաղվող ստորաբաժանումների և Ամալ Քլունիի գրասենյակի (Office of Amal Clooney) հետ: Նատիայի ղեկավարությամբ իրականացված աշխատանքն առանցքային դեր է ունեցել Գերմանիայում «Իսլամական պետության» մի շարք անդամների դատապարտման գործում, այդ թվում՝ եզդիների դեմ իրականացված ցեղասպանության համար:
2019 թվականին Նատիան աջակցել է եզդի կին իրավապաշտպանների խմբին՝ հիմնելու Եզդի վերապրածների ցանցը (Yazidi Survivors Network, YSN): Նրանց հետ միասին քարոզարշավ է իրականացրել Եզդի վերապրածների մասին օրենքի (Yazidi Survivors Law) ընդունման համար՝ մինչև դրա ընդունումը 2021 թվականի մարտին:
Մինչ «Յազդա»-ին միանալը Նատիան Փարիզում աշխատել է միջազգային հանրային իրավունքի և միջազգային արբիտրաժի ոլորտներում մասնագիտացած, համաշխարհային ճանաչում ունեցող իրավաբանական ընկերությունում: Նաև աշխատել է որպես հետազոտական օգնական Լոնդոնի արբիտրաժային դատարանում (London Court of Arbitration) և որպես դասախոսի օգնական՝ Փարիզի Պանթեոն-Սորբոնի համալսարանում (Université Panthéon-Sorbonne):
Նատիան Փարիզի փաստաբանների պալատի (Paris Bar) անդամ է: Գերմանիայի Քյոլնի համալսարանում և Ֆրանսիայի Փարիզի Պանթեոն-Սորբոն առաջին համալսարանում ստացել է գերմանական և ֆրանսիական իրավունքի երկակի բակալավրի աստիճան: Նաև միջազգային իրավունքի մագիստրոսի աստիճաններ է ստացել Փարիզի Պանթեոն-Սորբոն առաջին համալսարանում և ԱՄՆ-ի Կոլումբիայի համալսարանում: Վերջինում սովորել է որպես մարդու իրավունքների ոլորտի և Ֆուլբրայթի ծրագրի կրթաթոշակառու (Human Rights Fellow, Fulbright scholar), ինչպես նաև արժանացել Դեյվիս Փոլքի կրթաթոշակին (Davis Polk Fellowship): Նատիան նաև Օբամայի հիմնադրամի առաջնորդների ծրագրի մասնակից է (Obama Foundation Leader):



ԴՈԿՏՈՐ ՖԻԼԻՊ ԱՄԲԱԽ

Դոկտոր Ֆիլիպ Ամբախը Միջազգային քրեական դատարանի (International Criminal Court, ICC) Տուժողների մասնակցության և հատուցումների բաժնի ղեկավարն է: Այդ պաշտոնում նա կազմակերպում և հեշտացնում է տուժողների մասնակցությունը դատարանում իրականացվող բոլոր քրեական վարույթներին, ինչպես նաև մեղադրական դատավճռի կայացման դեպքում՝ տուժողներին հատուցում տրամադրելու գործընթացը:

Նախկինում ավելի քան վեց տարի զբաղեցրել է Միջազգային քրեական դատարանի նախագահի հատուկ օգնականի պաշտոնը:

Մինչ այդ աշխատել է ՄԱԿ-ի երկու հատուկ տրիբունալներում՝ նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական տրիբունալում (International Criminal Tribunal for the former Yugoslavia, ICTY) և Ռուանդայի հարցերով միջազգային քրեական տրիբունալում (International Criminal Tribunal for Rwanda, ICTR) որպես Վերաքննիչ պալատի դատավորների իրավական խորհրդական: Դրանից առաջ աշխատել է որպես կրտսեր իրավաբան նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական տրիբունալի քարտուղարությունում:

Պարոն Ամբախը Բեռլինի Ազատ համալսարանում (Free University of Berlin) ստացել է միջազգային քրեական իրավունքի դոկտորի գիտական աստիճան: Նաև որպես դատախազ ընդունվել է Գերմանիայի Քյոլն քաղաքի դատախազություն: 2004 թվականին նա Բեռլինի Հումբոլդտի համալսարանում (Humboldt University of Berlin) ստացել է իրավագիտության մագիստրոսի աստիճան:

Տարբեր իրավաբանական հաստատություններում որպես հրավիրյալ դասախոս դասավանդում է միջազգային քրեական իրավունք և միջազգային մարդասիրական իրավունք: Այդ ոլորտներում նա հեղինակել է մի շարք գիտական հրապարակումներ:



ԳԱԲՐԻԵԼԱ ՌԱԴՈՒ

Գաբրիելա Ռադուն՝ Թ. Մ. Ք. Ասսեր ինստիտուտի (T.M.C. Asser Instituut) հետազոտող է, որն աշխատում է միջազգային և ներպետական քրեական արդարադատության, պատասխանատվության և իրավունքի գերակայության բարեփոխումների հատման կետում: Նա ինստիտուտում սկսել է աշխատել 2022 թվականին՝ «MATRA. Միջազգային հանցագործությունների քննության և դրանց համար քրեական հետապնդման ոլորտում Ուկրաինայի կարողությունների ամրապնդում» ծրագրի շրջանակում: Ծրագիրն իրականացվել է 2020–2024 թվականներին: Այդ ժամանակից ի վեր նրա աշխատանքը հիմնականում կապված է Ուկրաինայում միջազգային հանցագործությունների համար պատասխանատվության ապահովման, դատական բարեփոխումների և իրավունքի գերակայության ամրապնդմանն ուղղված ծրագրերի հետ:

Ներկայումս աշխատում է «Ուկրաինայում արժանապատվության և արդարության վերականգնում» և «MATRA. Ուկրաինայում իրավունքի գերակայության ամրապնդում՝ դատական համակարգի և խոսքի ազատության ամրապնդման միջոցով» (2025–2029) ծրագրերի շրջանակում: Ուկրաինայում միջազգային հանցագործությունների համար պատասխանատվության ապահովմանն ուղղված ինստիտուտի գործունեության շրջանակում ղեկավարել է օրենսդրական բարեփոխումների աշխատանքները՝ նպատակ ունենալով Ուկրաինայի ներպետական օրենսդրության մեջ ամրագրել միջազգային հանցագործությունների վերաբերյալ իրավական դրույթները: Այդ աշխատանքներն իրականացրել է Ուկրաինայի խորհրդարանի անդամների և այլ շահագրգիռ կողմերի հետ սերտ համագործակցությամբ:

Համակարգում է միջազգային հանցագործությունների համար պատասխանատվությանն առնչվող դատական համակարգի ներկայացուցիչների ներգրավման միջոցառումները և Ասեր ինստիտուտի ներդրումը Ուկրաինայի դատական համակարգի համար նախատեսված միջազգային քրեական իրավունքի գիտելիքների հարթակում: MATRA-ի իրավունքի գերակայության ծրագրի շրջանակում նաև համակարգում է ուկրաինական դատարաններում արհեստական բանականության կառավարման և կիրառման վերաբերյալ ինստիտուտի աշխատանքը:
Գաբրիելան համակարգում է նաև Կամուրջ («Միջազգային և ներպետական ապացույցների հավաքման համար կապերի կառուցում») նախագծի Ասեր ինստիտուտի բաղադրիչը: Նախագիծը ֆինանսավորվում է էրբիլում Նիդերլանդների գլխավոր հյուպատոսության կողմից և աջակցում է Իրաքում և Իրաքի Քուրդիստանի շրջանում ԻՊ-ի հանցագործությունների համար պատասխանատվության ապահովման ջանքերին:
Նրա հետազոտությունները կենտրոնանում են միջազգային հանցագործությունների համար պատասխանատվության, ինստիտուցիոնալ և դատական բարեփոխումների, ինչպես նաև Ուկրաինայի իրավական դաշտն ու դատական պրակտիկան միջազգային և եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու վրա՝ այդ թվում ԵՄ անդամակցության համատեքստում:
Ավելի լայն հետազոտական հետաքրքրությունները ներառում են թվայնացման և արհեստական բանականության ազդեցությունը արդարադատության համակարգերի վրա՝ ներառյալ դատական հաստատությունները, իրավաբանական մասնագիտությունների ներկայացուցիչները, ընթացակարգերն ու ապացույցների հետ աշխատանքի պրակտիկան, ինչպես նաև այդ ազդեցությունների հետևանքները հիմնարար իրավունքների պաշտպանության համար: Հետաքրքրված է նաև միջազգային իրավունքի նկատմամբ ձևավորվող իրավատեսական մոտեցումներով:
2023-2024 թվականներին համակարգել է ուկրաինական իրավաբանական դպրոցների համար միջազգային քրեական իրավունքի և դատավարության միջհամալսարանական ծրագիրը, որը ֆինանսավորվում էր ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) «Արդարություն բոլորի համար» ծրագրով և աջակցում էր ուկրաինական ակադեմիական հաստատությունների համագործակցությանը և կարողությունների զարգացմանը:
Գաբրիելան Ամստերդամի համալսարանից ստացել է միջազգային հանրային իրավունքի մագիստրոսի աստիճան՝ հետազոտական ուղղվածությամբ, այդ թվում՝ ուսանողական փոխանակմամբ սովորել է Ջորջթաունի համալսարանի իրավաբանական կենտրոնում: Նաև Հալի համալսարանից ստացել է միջազգային իրավունքի բակալավրի գերազանցության աստիճան՝ եվրոպական իրավունքի ուսումնասիրությամբ, ներառյալ ուսանողական փոխանակում Տիլբուրգի համալսարանում:



ԴՈԿՏՈՐ ԵՂԻՇԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Դոկտոր Կիրակոսյանը միջազգային իրավունքի ոլորտում հիմնավոր ակադեմիական պատրաստվածությամբ գիտնական և դասախոս է: 2006 թվականին Երևանի պետական համալսարանում թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց ի վեր նա աշխատում է Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնում որպես ասիստենտ: Իրավաբանական կրթության հանդեպ նրա նվիրվածությունն արտացոլվում է Երևանի պետական համալսարանում և Հայաստանի այլ առաջատար համալսարաններում դասավանդման հարուստ փորձով, ինչպես նաև իրավագիտության մագիստրոսական այս ծրագրի հեղինակ լինելով:
Ակադեմիական գործունեությանը զուգահեռ՝ դոկտոր Կիրակոսյանը զբաղվել է միջազգային իրավական պրակտիկայով: Վերջին վեց տարիների ընթացքում որպես միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ ներկայացրել է Հայաստանի Հանրապետությունը տարբեր միջազգային ատյաններում, այդ թվում՝ Արդարադատության միջազգային դատարանում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, միջազգային արբիտրաժային տրիբունալներում և օտարերկրյա դատարաններում: Նա «Equity Law Partners» իրավաբանական ընկերության համահիմնադիրն ու կառավարող գործընկերն է. ընկերությունը մասնագիտացած է կորպորատիվ իրավունքի, վեճերի լուծման և ռազմավարական խորհրդատվության մեջ:
Դոկտոր Կիրակոսյանը Ներդրումային վեճերի լուծման միջազգային կենտրոնի (ICSID) արբիտրների և հաշտարարների ցանկերի անդամ է: 2016 թվականից Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի արտոնագրված փաստաբան է և վերջերս միացել է Հայաստանի արբիտրաժի և հաշտարարության կենտրոնի խորհրդին:



ԴԱՎԻԹ ԳԵՒՈՐԳՅԱՆ

Դավիթ Գևորգյանը Երևանում գործող ավելի քան 20 տարվա փորձառությամբ կլինիկական հոգեբան և հոգեթերապևտ է՝ տրավմայի և մարդու իրավունքների ոլորտներում: Նա ղեկավարել է խոշտանգում վերապրած անձանց վերականգնողական ծրագիրը, ինչպես նաև, որպես փորձագետ, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից իրականացրել է ազատությունից զրկման վայրերի մշտադիտարկում:
2020 թվականի Լեռնային Ղարաբաղի պատերազմից հետո ղեկավարել է պատերազմից տուժած զինծառայողների և քաղաքացիական անձանց վերականգնողական կենտրոնը, ինչպես նաև ստեղծել և համակարգել է «Ձինվորի տուն» վերականգնողական կենտրոնի հոգեբանական ծառայությունները: Համագործակցել է Եվրոպայի խորհրդի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և Եվրոպական միության հետ: Հեղինակել է ավելի քան 50 հրապարակում, որոնցից շատերը վերաբերում են տրավմային և պատերազմի հետևանքով առաջացած հոգեկան առողջության խնդիրներին: Կլինիկական հոգեբանություն է դասավանդում Երևանի պետական համալսարանում և ղեկավարում ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոնը: Նաև Կոգնիտիվ-վարքաբանական թերապիայի գիտակրթական հայկական ասոցացիա նախագահն է:



ԹԻՔՐԱՆ ՄԱՏՈ

Թիքրան Մատոն Հյուսիսային Իրաքի Սինջար շրջանից է, վերապրել է եզդիների ցեղասպանությունը և զբաղվում է իրավապաշտպան գործունեությամբ՝ հանուն արդարության հաստատման, հիշողության պահպանման և վերապրածների իրավունքների պաշտպանության: Որպես «Ոչ ոք չի լսում» (Nobody's Listening) կազմակերպության տնօրեն նա նպաստում է միջազգային իրավապաշտպան գործունեությանը՝ վերապրածների նախաձեռնությամբ ու առաջնորդությամբ նրանց պատմությունների ներկայացման, կրթության և հանրության ներգրավման միջոցով: Այդ աշխատանքը ներառում է նաև խորհրդարանների, համալսարանների և իրավապաշտպան հաստատությունների հետ համագործակցությունը: Նա վերապրածների համայնքների համար անցկացրել է իրավապաշտպան գործունեության վերաբերյալ դասընթացներ: Նախկինում Անհետ կորած անձանց միջազգային հանձնաժողովում (International Commission on Missing Persons, ICMP) աշխատելիս աջակցել է նաև անհետ կորած անձանց ընտանիքներին: Իր իրավապաշտպան գործունեությամբ ձգտում է ապահովել, որ զոհերի ձայնը շարունակի առանցքային տեղ զբաղեցնել հիշատակի պահպանման, կանխարգելման և հաշվետվողականության վերաբերյալ քննարկումներում:



ԱՐԱ ՂԱԶԱՐՅԱՆ

Արա Ղազարյանը քրեական գործերով պաշտպանությամբ զբաղվող փաստաբան է և Հայաստանում գործող փաստաբանական գրասենյակի հիմնադիր: Նա մասնագիտացած է մարդու իրավունքների եվրոպական իրավունքի ոլորտում և ներկայացնում է դիմումատուների շահերը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում և Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կոմիտեում: 2010 թվականից ի վեր ակտիվորեն զբաղվում է Ադրբեջանի դեմ մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային դատավարություններով՝ ներկայացնելով մարդու իրավունքների լուրջ և լայնածավալ խախտումներին առնչվող գործեր:



ԴՈԿՏՈՐ ՊԱԲԼՈ ԳԱՎԻՐԱ ԴԻԱՍ

Դոկտոր Պաբլո Գավիրա Դիասը Նյուրնբերգյան սկզբունքների միջազգային ակադեմիայի ծրագրերի պատասխանատու է, որտեղ զբաղվում է մի շարք ուղղություններով, այդ թվում՝ իրավական հետազոտություններով, քաղաքականության վերլուծությամբ, միջոցառումների կազմակերպմամբ, ինչպես նաև միջազգային քրեական արդարադատության ոլորտում գիտելիքների հանրային տարածմամբ:
Նա իսպանացի իրավաբան է, որը մասնագիտացած է միջազգային մարդասիրական և միջազգային քրեական իրավունքի ոլորտներում: Իրավագիտության դոկտորի աստիճանը՝ միջազգային իրավունքի մասնագիտացմամբ, ստացել է Քիլի Քրիստիան Ալբրեխտի համալսարանի Վալթեր Շյուկինգի անվան միջազգային իրավունքի ինստիտուտում: Նրա դոկտորական հետազոտությունը նվիրված է եղել անշարժ մշակութային արժեքների միջազգային պաշտպանությանը և միջազգային քրեական իրավունքի շրջանակներում այդ արժեքների դեմ իրականացվող հարձակումների համար քրեական պատասխանատվությանը:
Դոկտոր Գավիրա Դիասը նաև աշխատել է ակադեմիական հաստատություններում, մասնավորապես՝ Վալթեր Շյուկինգի անվան միջազգային իրավունքի ինստիտուտում, Փոքրամասնությունների հարցերով եվրոպական կենտրոնում և Պրիշտինայի համալսարանում:
Բացի այդ իրավական աջակցություն է ցուցաբերել Եվրոպայում դաշնակից ուժերի գերագույն շտաբին (SHAPE), որը պատասխանատու է ՆԱՏՕ-ի բոլոր ռազմական գործողությունների պլանավորման և իրականացման համար:



ՄԻՇԱ ԿԻՒՐԵՂԵԱՆ ՀԱԼԼ

Միշա Կիւրեղեան Հալլը Կոսովոյի մասնագիտացված պալատներում աշխատում է որպես պաշտպանության կողմի իրավաբանական աշխատակից: Նա ընդգրկված է կամ նախկինում ընդգրկված է եղել Միջազգային քրեական դատարանում և Քրեական տրիբունալների միջազգային մնացորդային մեխանիզմում գործող պաշտպանության թիմերի կազմում:
Մասնակցել է «Ճշմարտության և արդարադատության կենտրոն»-ի բազմաթիվ ծրագրերի, այդ թվում՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների պայմանագրային մարմինների և հատուկ ընթացակարգերի մանդատակիրների առջև տուժողների շահերի պաշտպանությանն ուղղված գործունեությանը:
Նաև հեղինակել է միջազգային քրեական իրավունքի և դատավարության, միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների վերաբերյալ մի շարք հրապարակումներ, որոնք լույս են տեսել, մասնավորապես, «Journal of International Criminal Justice, International Review of the Red Cross և Melbourne Journal of International Law» գիտական հանդեսներում, ինչպես նաև միջազգային իրավունքի հարցերին նվիրված հանրահայտ մասնագիտական բլոգներում:
Իրավագիտություն է ուսումնասիրել Օքսֆորդի համալսարանում, իսկ միջազգային հարաբերություններ՝ Կալիֆոռնիայի համալսարանի Լոս Անջելեսի մասնաճյուղում (UCLA):



ՆԻԿՈԼԱՍ ՔՈՒՄՋՅԱՆ

2019 թվականին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիու Գուտերեշը Նիկոլաս Քումջյանին նշանակել է Մյանմայի հարցերով անկախ քննչական մեխանիզմի ղեկավար: Մեխանիզմի լիազորությունն է հավաքել և վերլուծել Մյանմայում կատարված միջազգային ծանր հանցագործությունների վերաբերյալ ապացույցները:

1981-2000 թվականներին նա աշխատել է որպես դատախազ Լոս Անջելեսում: Դրանից հետո զբաղեցրել է տարբեր պաշտոններ միջազգային կառույցներում՝ մասնավորապես քրեական հետապնդում իրականացնելով նախկին Հարավսլավիայում, Արևելյան Թիմորում, Սիեռա Լեոնեում և Կամբոջայում կատարված միջազգային հանցագործությունների համար:



ՇՏԵՖԱՆ ՎԵՍՊԻ

Շտեֆան Վեսպին զբաղեցրել է Նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական տրիբունալի (ICTY) դատավարությունների գծով ավագ դատախազի պաշտոնը, ինչպես նաև աշխատել է որպես Շվեյցարիայի դաշնային դատախազ: Նա նաև զբաղեցրել է ՄԱԿ-ի միջազգային անկախ քննչական հանձնաժողովի (UNIIIC) գործերով ավագ իրավաբանի պաշտոնը Բեյրութում՝ Լիբանանի վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանության հետաքննության շրջանակում, ինչպես նաև ղեկավարել է ՄԱԿ-ի երկու հետաքննող հանձնաժողովների (Գազայի հատվածի և Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության հարցերով) քննչական աշխատանքները: Վերջին շրջանում զբաղեցրել է միջազգային քննչական դատավորի պաշտոնը Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետության Հատուկ քրեական դատարանում (SCC):



ՔՐԻՍՏԻԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Քրիստիան Մխիթարյանը Գերմանիայում գործող իրավաբան է: Նա 2016 թվականին ավարտել է Ֆրանկֆուրտի Գյոթեի անվան համալսարանը՝ մասնագիտանալով իրավունքի միջազգայնացման և եվրոպականացման ոլորտում: 2017 թվականին պրակտիկա է անցել Գերմանիայի Բունդեսթագում, իսկ այնուհետև աշխատել է որպես ինտեգրման խորհրդատու և կամավոր լեզվական ու մշակութային միջնորդ: Նույն թվականին համահիմնել է Գերմանահայ իրավաբանների միությունը (DEARJV) և այդ ժամանակից ի վեր միության Խորհրդի անդամ է: Փաստաբանական գործունեությամբ է զբաղվում 2020 թվականի սկզբից, իսկ 2021 թվականի մայիսին հիմնել է սեփական իրավաբանական գրասենյակը: 2022 թվականին որպես հեղինակ մասնակցել է «Լեռնային Ղարաբաղ. Արցախի հակամարտության իրավական վերլուծություն» ժողովածուի ստեղծմանը:



ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ՀԻԼԴԵ ՖԱՐԹՀՈՖԵՐԸ

Դոկտոր, պրոֆեսոր Հիլդե Ֆարթհոֆերը էրլանգեն-Նյուրնբերգի համալսարանի (University of Erlangen-Nuremberg) Քրեական իրավունքի և քրեական արդարադատության ինստիտուտի դոցենտ է: Նա նաև աշխատում է Կիրառական վարչական գիտությունների դաշնային համալսարանի (Federal University of Applied Administrative Sciences) Դաշնային ոստիկանության բաժնում: Նախկինում պրոֆեսորի ժամանակավոր պաշտոնակատար է եղել Բոննի, Մյունստերի, Տյուբինգենի և Մյունխենի համալսարաններում: 2019 թվականի հունվարին էրլանգեն-Նյուրնբերգի համալսարանում ստացել է հաբիլիտացիա՝ ինքնուրույն համալսարանական դասավանդման և հետազոտական գործունեության որակավորում՝ գերմանական և միջազգային քրեական իրավունքի ու քրեական դատավարության, իրավունքի նորագույն պատմության և համեմատական քրեական իրավունքի ոլորտներում: Ավարտել է Ավստրիայի Զալցբուրգի համալսարանը (University of Salzburg)՝ ստանալով իրավաբանական կրթություն:



ՍԻՐԱՆՈՒՇ ՍԱՀԱԿՅԱՆ

Սիրանուշ Սահակյանը մարդու իրավունքների պաշտպան և իրավական փորձագետ է՝ մարդու իրավունքների պաշտպանության, դատական բարեփոխումների, հակակոռուպցիոն քաղաքականության և ռազմավարական դատավարությունների ոլորտներում ավելի քան 15 տարվա փորձով: Նա Հայաստանում զբաղեցրել է պետական բարձր պաշտոններ և ծառայել որպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ժամանակավոր (ad hoc) դատավոր:

«Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոն»-ի նախագահն է և Հայաստանի փաստաբանների պալատի անդամ: Որպես մի շարք քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, այդ թվում՝ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» կազմակերպության հիմնադիր ակտիվորեն նպաստել է Հայաստանում իրավունքի գերակայության, պատասխանատվության և մարդու իրավունքների պաշտպանության առաջմղմանը:

Իրավաբանական և իրավապաշտպան գործունեությանը զուգահեռ՝ տիկին Սահակյանն ակտիվորեն զբաղվում է ակադեմիական և մասնագիտական կրթությամբ՝ մասնակցելով համալսարանական դասավանդմանը, իրավական հետազոտություններին և ուսանողների ու մասնագետների վերապատրաստմանը՝ մարդու իրավունքների միջազգային իրավունքի, միջազգային հանրային իրավունքի և հարակից ոլորտներում:

Տիկին Սահակյանն ունի մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և տարածաշրջանային մեխանիզմների առջև դատավարությունների վարման մեծ փորձ՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով պատերազմական հանցագործություններին, բռնի անհետացումներին, կամայական կալանքին, խոշտանգումներին և մարդու իրավունքների այլ ծանր խախտումներին: Ներկայումս միջազգային վարույթներում ներկայացնում է հայ ռազմագերիներին և նրանց ընտանիքներին՝ իրավական պաշտպանությունը համատեղելով փաստագրման, քաղաքականության մշակմանը մասնակցելու և հանրային իրազեկման հետ:

Նրա մասնագիտական ավանդը ճանաչվել է մի շարք ազգային և միջազգային պարգևներով, այդ թվում՝ Հայաստանի «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» պետական մեդալով, Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի Արևելյան շրջանի «Ազատություն» մրցանակով, Ժան-Կլոդ Բարալի անվան պաշտպանության և մարդու իրավունքների մրցանակով, Ճշմարտության և արդարության կենտրոնի 2024 թվականի «Տարվա իրավաբան» մրցանակով և Ավստրալիայի Հայ դատի հանձնախմբի 2025 թվականի Ռաֆայել Լեմկինի անվան մրցանակով, որը շնորհվել է ի ճանաչումն հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության գործում նրա նշանակալի աշխատանքի:



ԳԵՒՈՐԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ, ՓԱՍՏԱԲԱՆ

Գևորգ Վարդանյանը քաղաքացիական հարցերով դատավարությունների փաստաբան է, բնակվում է Լոս Անջելեսում, Կալիֆոռնիայում: Նա ներկայացնում է անհատներին անձնական վնասվածքներ, ինչպես նաև աշխատանքային և աշխատանքային իրավունքի վեճերում: Որպես CFTJ–ի տնօրենների խորհրդի անդամ, զբաղվել է Հայաստանում իրավաբանական ֆակուլտետի ուսանողների կրթմամբ և վերապատրաստմամբ՝ ընդունելի վկայությունների հավաքագրման մեթոդաբանությունների վերաբերյալ :
Նա Հայաստանում անցկացվող «Ճշմարտության և արդարադատության կենտրոն»-ի ամենամյա համաժողովի նախագահն է:



ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Լուսինե Սարգսյանը Լոնդոնի տնտեսագիտության և քաղաքական գիտությունների դպրոցից ստացել է մարդու իրավունքների մագիստրոսի աստիճան՝ միջազգային հանրային իրավունքի ուղղվածությամբ: Հայաստանի ամերիկյան համալսարանում ստացել է անգլերենի և հաղորդակցության բակալավրի աստիճան՝ փիլիսոփայություն, քաղաքականություն և տնտեսագիտություն լրացուցիչ մասնագիտացմամբ: Նրա մասնագիտական փորձը ներառում է EVN Report-ի համար մարդու իրավունքների վերաբերյալ վերլուծությունների պատրաստումը, Հայաստանի կառավարության անցումային արդարադատության օրակարգի մշակմանն աջակցող հետազոտությունները, աշխատանքը Հայաստանի Սահմանադրական դատարանում և 2023 թվականին Ճշմարտության և արդարադատության կենտրոնի աշխատանքին մասնակցությունը: Մինչ ժողովրդավարության զարգացման հիմնադրամին միանալը նա ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակում աշխատել է Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցերի, իսկ ՄԱԿ ՓԳՀ-ի հայաստանյան գրասենյակում՝ Լեռնային Ղարաբաղից փախստականների խնդիրների ուղղությամբ:



ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ԼՅՈՒՔ ՄՈՖԵԹ

Դոկտոր, պրոֆեսոր Լյուք Մոֆեթը Բելֆաստի Քուինս համալսարանի (Queen’s University Belfast) մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի ամբիոնի վարիչն է: Նրա հետազոտությունները կենտրոնանում են տուժողների իրավունքների, հատուցման, քաղաքացիական անձանց պատճառված վնասի և զինված հակամարտություններում ալգորիթմների դերի ընդլայնման վրա: Նա դաշտային հետազոտություններ է իրականացրել հակամարտություն վերապրող կամ հետհակամարտային փուլում գտնվող ավելի քան տասներկու հասարակություններում: Նաև աշխատել է տուժողների տարբեր խմբերի հետ՝ իրավապաշտպան գործունեության և դատական գործընթացների միջոցով նրանց խախտված իրավունքների վերականգնմանն ու հատուցմանն աջակցելու նպատակով: «Արդարություն տուժողների համար Միջազգային քրեական դատարանում» (Justice for Victims before the International Criminal Court, Ռութլեջ հրատարակչություն, 2014), «Հատուցում և պատերազմ» (Reparations and War, Օքսֆորդի համալսարանի հրատարակչություն, 2023) և «Պատերազմի ալգորիթմները» (Algorithms of War, Բրիստոլի համալսարանի հրատարակչություն, 2026) գրքերի հեղինակն է:



ՋՈԶԵՖ ՇԵԿԼԱ

Ջոզեֆ Շեկլան Բնակարանային և հողային իրավունքների ցանցի (HLRN) հիմնադիրներից է և համակարգողը: Ցանցը «Հաբիթաթ» միջազգային կոալիցիայի թեմատիկ կառույցներից է: Կոալիցիան հիմնադրվել է 50 տարի առաջ՝ 1976 թվականին կայացած ՄԱԿ-ի Հաբիթաթի առաջին համաժողովի ընթացքում:
Միջազգային հարաբերությունների ոլորտում ակադեմիական կրթություն ստացած Շեկլան մասնագիտացել է պետությունների՝ մարդու իրավունքների ոլորտում ստանձնած պարտավորությունների և նրանց արտաքին քաղաքականության համեմատական վերլուծության մեջ՝ հատուկ ուշադրություն դարձնելով Արևմտյան Ասիայի և Հյուսիսային Աֆրիկայի վրա դրանց ազդեցությանը:
Նա զբաղվել է ակադեմիական գործունեությամբ Կահիրեի ամերիկյան համալսարանի իրավագիտության բաժնում և պաշտոնավարել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակում՝ Պաղեստինում, Թունիսում և Լիբիայում:
2000 թվականից ղեկավարում է իր կազմակերպության աշխատանքը՝ ուղղված հարկադիր վտարումների, տեղահանության, բնակչության տեղափոխման և բնակարանային ու հողային իրավունքների այլ խախտումների հետևանքների քանակական գնահատմանն ու վերացմանը: Նաև ղեկավարում է քաղաքացիական հասարակության կազմակերպություններին աջակցելու աշխատանքը՝ օգնելով նրանց իրենց ծրագրերում կիրառել համապատասխան իրավական նորմերը:
Շեկլայի ղեկավարությամբ ցանցը վարում է նաև խախտումների համաշխարհային տվյալների շտեմարան և հրապարակում առանձին դեպքերի վրա հիմնված ու թեմատիկ հետազոտություններ:
Իր անդամների և քաղաքացիական հասարակության գործընկերների հետ համատեղ ցանցը նաև իրականացնում է իրավապաշտպան գործունեություն ՄԱԿ-ի մարդու իրավունքների և զարգացման համակարգերի շրջանակներում:



ՀՈՒՎԵՅԴԱ ԱՐՐԱՖ

Հուվեյդա Արրաֆը Պաղեստինյան ծագումով ամերիկացի փաստաբան է, քաղաքացիական և մարդու իրավունքների պաշտպան, ակտիվիստ ու կազմակերպիչ: 2001 թվականին նա համահիմնել է Միջազգային համերաշխության շարժումը՝ պաղեստինցիների ղեկավարությամբ գործող ոչ բռնի դիմադրության միջազգային շարժում, որը երկու անգամ առաջադրվել է խաղաղության Նոբելյան մրցանակի:
Ալ-Քուդսի համալսարանում օգնել է հիմնել արաբական աշխարհում իրավունքի գործնական ուսուցման առաջին հավատարմագրված ծրագրերից մեկը: Նաև եղել է փաստաբանների առաջին պատվիրակության կազմակերպիչներից, որը Գազա է մուտք գործել Իսրայելի՝ 2008–2009 թվականներին իրականացրած «Ձուլածո կապար» ռազմական գործողությունից հետո:
Եղել է «Ազատ Գազա» շարժման նախագահը և 2008 թվականին գլխավորել հինգ հաջողված ծովային ուղևորություն՝ Գազայի նկատմամբ Իսրայելի սահմանած անօրինական ու մահաբեր շրջափակումը ճեղքելու նպատակով: Նա նաև 2010 թվականի «Գազայի ազատության նավատորմիղի» հիմնական կազմակերպիչներից էր: Նավատորմիղը ենթարկվել է իսրայելական ուժերի հարձակմանը, որը հանգեցրել է մարդկային զոհերի: 2011 թվականին վեց պաղեստինցի «Ազատության ուղևորներից» մեկն էր, որոնք բողոքի գործողությամբ հանդես են եկել Իսրայելի հասարակական տրանսպորտում ռասայական տարանջատման դեմ: Դրա համար նրանք ծեծի են ենթարկվել և ձերբակալվել:
Ներկայումս Հուվայդան բնակվում է Դետրոյթում և զբաղվում քաղաքացիական իրավունքների պաշտպանությանն ուղղված փաստաբանական գործունեությամբ: Նա պաշտպանում է պետական մարմինների և այլ հաստատությունների չարաշահումներից տուժած անձանց իրավունքները՝ ներառյալ ոստիկանական բռնության, ապօրինի ձերբակալությունների, ընտրելու իրավունքից զրկելու և Պաղեստինի օգտին հանդես եկող ուսանողների նկատմամբ ճնշումների դեպքերը:

Ազգային իրավաբանների գիլդիայի՝ Պաղեստինի հարցերով ենթահանձնաժողովի նախկին համանախագահի է և մի շարք իրավապաշտպան ու պաղեստինյան կազմակերպությունների վարչությունների անդամ: Որպես «Ազատության նավատորմիղ» կոալիցիայի ղեկավար հանձնախմբի անդամ շարունակում է կազմակերպել քաղաքացիական նավատորմիղների ուղևորություններ Գազայի նկատմամբ Իսրայելի սահմանած անօրինական շրջափակումը ճեղքելու նպատակով:

2025 թվականին նա ղեկավարել է «Հանդալա» և «Խիղճ» առաքելությունները: Երկուսն էլ ենթարկվել են իսրայելական ուժերի հարձակմանը, ինչի հետևանքով հարյուրավոր միջազգային ակտիվիստներ առևանգվել են, ենթարկվել բռնության և արտաքսվել:



ՍԱՌԱ ԼԵԱ ՈՒԻԹՍՈՆ

Սառա Լեա Ուիթսոնը իրավաբան և հեղինակ է, որի մասնագիտական գործունեությունը կենտրոնանում է մարդու իրավունքների, մարդասիրական իրավունքի և ԱՄՆ արտաքին քաղաքականության վրա: 2020–2026 թվականներին նա եղել է «Ժողովրդավարություն արաբական աշխարհի համար՝ հիմա» (Democracy for the Arab World Now, DAWN) կազմակերպության գործադիր տնօրենը: Կազմակերպությունը նպատակ ունի բարեփոխել ԱՄՆ քաղաքականությունը Մերձավոր Արևելքում: 2004–2020 թվականներին ղեկավարել է «Մարդու իրավունքների դիտորդ» (Human Rights Watch) կազմակերպության Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի բաժինը որպես գործադիր տնօրեն՝ վերահսկելով բաժնի աշխատանքը 19 երկրում: Ներկայումս նա Պաղեստինցիների արդարության միջազգային կենտրոնի (International Centre of Justice for Palestinians), Գեղարվեստական ազատության նախաձեռնության (Artistic Freedom Initiative), «Արդարություն հանուն մարդու իրավունքների» (ALQST for Human Rights), «Գործողություն հանուն հույսի» (Action for Hope), Հայաստանում ժողովրդավարության միջազգային դիտարանի (International Observatory for Democracy in Armenia) և Հայ փաստաբանների միության (Armenian Bar Association) վարչությունների անդամ է: Նաև Արտաքին հարաբերությունների խորհրդի (Council on Foreign Relations) անդամ է: Ուիթսոնը ղեկավարել է տասնյակ իրավապաշտպան և հետաքննական առաքելություններ Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում՝ կենտրոնանալով զինված հակամարտությունների, մարդու իրավունքների, պատասխանատվության ապահովման, ինչպես նաև իրավական և քաղաքական բարեփոխումների հարցերի վրա: Նրա բազմաթիվ հոդվածներ հրապարակվել են միջազգային և տարածաշրջանային լրատվամիջոցներում, այդ թվում՝ «Նյու Յորքի ժամանակներ» (The New York Times), «Արտաքին հարաբերություններ» (Foreign Affairs), «Վաշինգտոնի փոստ» (The Washington Post), «Արտաքին քաղաքականություն» (Foreign Policy), «Լոս Անջելեսի ժամանակներ» (The Los Angeles Times), «Ամերիկյան հեռանկար» (American Prospect) պարբերականներում և «Մալուխային լրատվական ցանցի» (Cable News Network, CNN) հարթակներում: Նաև պարբերաբար հանդես է գալիս միջազգային լրատվամիջոցներում՝ որպես մեկնաբան: Մայքլ Օմեր-Մանի հետ համահեղինակած նրա «Ապարտեիդից դեպի ժողովրդավարություն. Իսրայելում և Պաղեստինում խաղաղության հաստատման ծրագիր» (From Apartheid to Democracy: A Blueprint for Peace in Israel-Palestine) գիրքը լույս է տեսել 2025 թվականի սեպտեմբերին՝ Կալիֆոռնիայի համալսարանի հրատարակչությունում (University of California Press): Նախկինում Ուիթսոնը Նյու Յորքում աշխատել է «Գոլդման, Սաքս և ընկերություն» (Goldman, Sachs & Co.) և «Քլիրի, Գոթլիբ, Սթին և Համիլթոն» (Cleary, Gottlieb, Steen & Hamilton) ընկերություններում: Ավարտել է Բերկլիի Կալիֆոռնիայի համալսարանը (University of California, Berkeley) և Հարվարդի իրավաբանական դպրոցը (Harvard Law School): Ազատ տիրապետում է անգլերենին, արաբերենին և հայերենին:



ՄԱՔՍԻՄԱՍ ՄԻԼՏԱ

Մաքսիմաս Միլտան «Հաշվետվողականության նախագիծ» (The Reckoning Project) կազմակերպության ծրագրերի տնօրենն է և Ուկրաինայի գրասենյակի ղեկավարը: Նա բնակվում և աշխատում է Կիևում, որտեղից ղեկավարում է կազմակերպության՝ Ուկրաինայում, Սուդանում և Պաղեստինում քաղաքացիական անձանց դեմ կատարված զանգվածային ոճրագործությունների փաստագրմանն ու մեղավորներին պատասխանատվության ենթարկելուն ուղղված աշխատանքները: Նախկինում Մաքսիմասը մասնակցել է ԱՄՆ-ի Գերմանական Մարշալի հիմնադրամի և Աշխարհաքաղաքականության ու անվտանգության ուսումնասիրությունների կենտրոնի հետազոտական ծրագրերին, ինչպես նաև աշխատել է Եվրոպական հումանիտար համալսարանում՝ Բելառուսից դուրս գործող բելառուսական համալսարանում: 2021 թվականից համագործակցում է Լիտվայի ազգային ռադիոյի և հեռուստատեսության հետ: Մաքսիմասը Վիլնյուսի համալսարանում ստացել է քաղաքագիտության մագիստրոսի աստիճան, իսկ Յեյլի համալսարանում՝ եվրոպական և ռուսաստանյան ուսումնասիրությունների մագիստրոսի աստիճան:



ԷՈՒԽԵՆԻԱ ՎԱԼԵՆՍՈՒԵԼԱ

Էուխենիա Վալենսուելան Միջազգային քրեական դատարանի դատախազի գրասենյակի իրավական հարցերով պատասխանատու է և ներկայումս ղեկավարում է փոխլրացման և քաղաքացիական հասարակության հարցերով թիմը: Նախկինում նա զբաղեցրել է դատախազի տեղակալի հատուկ օգնականի պաշտոնը՝ խորհրդատվություն տրամադրելով տարբեր իրավիճակներին առնչվող ռազմավարական, քաղաքականության և կառավարման հարցերի շուրջ: Դրանից առաջ ղեկավարել է Կոլումբիայի, Վենեսուելայի և Հոնդուրասի իրավիճակների նախնական ուսումնասիրությունները և աշխատել Գվինեայի, Բուրունդիի ու մի շարք այլ իրավիճակների ուղղությամբ: Մինչ Միջազգային քրեական դատարանին միանալը՝ Եվգենիան տարբեր պաշտոններում աշխատել է նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի հարցերով միջազգային քրեական տրիբունալներում, ինչպես նաև այլ ոչ կառավարական և միջազգային կազմակերպություններում: Նա պերուացի իրավաբան է և ունի միջազգային հանրային իրավունքի մագիստրոսի աստիճան:



ԴՈԿՏՈՐ ԻՐԵՆԵ ՎԻԿՏՈՐԻԱ ՄԱՍԻՄԻՆՈ

Դոկտոր Իրենե Վիկտորիա Մասիմինոն իրավաբան է, որը մասնագիտացած է միջազգային քրեական իրավունքի և մարդու իրավունքների ոլորտներում: Նա ԱՄՆ-ի Ինդիանայի համալսարանի Ռոբերտ Հ. ՄաքՔինիի անվան իրավաբանական դպրոցից ստացել է իրավագիտության դոկտորի (S.J.D.) և մագիստրոսի (LL.M.) աստիճաններ: Ներկայումս նույն հաստատությունում որպես հրավիրյալ պրոֆեսոր դասավանդում է միջազգային հանրային և միջազգային քրեական իրավունք: Նաև Մեծ Բրիտանիայի Լոնդոնի համալսարանից ստացել է մարդու իրավունքների մագիստրոսի աստիճան, իսկ Արգենտինայի Լա Պլատայի ազգային համալսարանի իրավաբանական և սոցիալական գիտությունների ֆակուլտետից՝ իրավաբանական կրթություն: Դոկտոր Մասիմինոն նախկինում եղել է Արգենտինայի Բուենոս Այրես նահանգի բարձրագույն քրեական դատարանի զեկուցող՝ կենտրոնանալով ինստիտուցիոնալ բռնության, ոստիկանական դաժանության և գենդերային բռնության գործերի վրա՝ նպաստելով մարդու իրավունքների ոլորտում կարևոր դատական նախադեպերի ձևավորմանը: Այդ պաշտոնում նաև անդամակցել է նահանգային կլոր սեղանին, որը ստեղծվել էր Բուենոս Այրես նահանգի բանտային համակարգում արտակարգ իրավիճակի լուծման նպատակով: Նրա մասնագիտական աշխատանքը կենտրոնանում է ներքին և միջազգային հակամարտությունների, մարդու իրավունքների ծանր խախտումների և զանգվածային ծանր հանցագործությունների, հատկապես ցեղասպանության վրա: Ծավալուն աշխատանք է իրականացրել Արգենտինային, Հայաստանին, Արցախին (Լեռնային Ղարաբաղ), Բանգլադեշին, Չիլիին, Կոլումբիային, Գվատեմալային, Իրաքին, Սոմալիլենդին, Ուկրաինային և այլ երկրներին առնչվող իրավիճակների շուրջ: Մասնակցել է միջազգային հետաքննող պատվիրակությունների և դատավարությունների դիտարկման առաքելությունների ինչպես նաև Ցեղասպանության կանխարգելման Լեմկինի ինստիտուտի համահիմնադիրներից է:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԵՐ
ՏԵՂԵԿԱԳՐԻՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ԱՅՑԵԼԵՔ WWW.CFTJUSTICE.ORG